

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

05.03.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյան - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Ա.Ադրյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Սահակյանը, Լ.Բերոյանը, Վ.Դոխոյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Ջեկ.Ն.Սարգսյան/
2. Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին
/Ջեկ.մարզպետի տեղակալներ/
3. Դեղերի դեղատոմսերով տրամադրման կարգի փոփոխության մասին
/Ջեկ.Ս.Լամբարյան /
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Ջեկ.Հ.Պապոյան/
5. Մարտի 8-ի միջոցառման մասին
/Ջեկ.Մ.Սայադյան/
6. Մարզի համայնքներին պարարտանյութերի և սերմացուների բաշխման գործընթացի մասին:
/Ջեկ.Գ.Հակոբյան/

Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ր վ ե ց՝

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Գարբիսյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Անհատական համեմատական վերլուծություններ կատարել համայնքների կողմից սեփական եկամուտներն առանձին հարկատեսակների (մասնավորապես՝ աղբահանության և վարձակալության գծով) հավաքագրման ուղղությամբ և վերահսկել պլանային ցուցանիշների կատարման ընթացքը:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա.Գարբիսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին՝

Անհրաժեշտ քննարկումներ կազմակերպել շահագրգիռ մարմինների և Մ-6 մայրուղու հարակից համայնքների ղեկավարների հետ՝ սահմանազատման հարցերը կարգավորելու և ճանապարհաշինական նորմերն ու կանոնները պահպանելու, ինչպես նաև իրավախախտումները բացառելու նպատակով:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Անհրաժեշտ վերլուծություններ կատարել և մինչև 31.03.2018թ. ներկայացնել տեղեկատվություն համայնքների կողմից աղբահանության ծախսերի և եկամուտների հավաքագրման համաչափության և ծախսաձածկման վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

Շրջաբերական ուղարկել մարզի առողջապահական հիմնարկներին՝ դեղերի դեղատոմսերով տրամադրման կարգի փոփոխությամբ պայմանավորված արհեստական խոչընդոտներ չստեղծելու և դժգոհություններ չառաջացնելու նպատակով ու վերահսկել դեղատոմսերով դեղերի տրամադրման կարգի պահպանման գործընթացը:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել հողօգտագործողների կողմից պարարտանյութերի և սերմացունների հավաքագրվող գումարների օրինականության և բաշխման գործընթացի նկատմամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ